# ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# «ՏՐԱՆՍ ՀԱՅԱՍՏԱՆ»

N 2

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՕԳՈՍՏՈՍ 2018



«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը տարածեց հայտարարություն, որով ամենայն խստությամբ դատապարտում է Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում տեղի ունեցած ատելության և բռնության միջադեպը 9 երիտասարդի կյանքի և առողջության նկատմամբ, որն արտահայտվել է նրանց հանդեպ հոգեբանական և ֆիզիկական ոտնձգությամբ: Սույն թվականի օգոստոսի 3-ին տեղացիները շրջափակել են տունը, որտեղ գտնվում էին 9 երիտասարդներ, այդ թվում նաև ԼԳԲՏ անձիք, ատելության կոչեր ու սպառնալիքներ են հնչեցրել նրանց հասցեին, փորձելնրանց տնից հանել՝ արտաքին տեսքի պատճառովենթադրելով, որ նրանք պատկանում են ԼԳԲՏ խմբին:

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն ԴԱԲԼ ԹՐԻ ՀԻԼԹՈՆ ՀՅՈՒՐԱՆՈՑԻ ՓԱՐԻԶ ՍՐԱՀՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՀԱՆԴԵՊ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՈՎ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ» 2016-2017 ԹԹ. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ:






«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԸ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԲԱՑԵՑ ՀՅՈՒՐԵՐԻՆ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ ՈՒՂՂԵԼՈՎ:






«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ի ԾՐԱԳՐԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՇՈՏ ԳԵՒՈՐԳՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ, Մ ԵԹՈԴՆԵՐԸ ԵՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ 100 ԴԵՊՔԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ:





«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ_Ի ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ԵՒ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏ ՎՐԵԺ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ԵՒ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ՀԿ-ԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԿՈՉԵՐՆ ՕՆԼԱՅՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ:






«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆԸ ԲԱՐՁՐԱՑՐԵՑ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ԱՆՎԱՆԱՓՈԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԵՒ ՀՈՐՄՈՆՈԹԵՐԱՊԻԱՅԻ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԴԵՌ ԻՐԱՎԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ՉԵՆ ՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ:

**2018** թ.-ի օգոստոսի **8**-ին «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ում տեղի ունեցավ ծանոթացում իրավաբան Արթուր Մարգարյանի հետ «Տրանս անձանց իրավական խնդիրներն և դրանց լուծումները» թեմայի շուրջ: Կատարվեց համայնքի իրավական կարիքների գնահատում: Մասնակիցները նշեցին իրավական ոլորտում իրենց խնդիրները՝ առանձնացնելով իրենց իրավունքների խախտումները հատկապես ձերբակալության, սեռափոխման և հորմոնոթերապիայի հետ կապված:







**2018**թ.-ի օգոստոսի **9**-ին «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ում տեղի ունեցավ ծանոթացում «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի նոր աշխատակցի, ինչպես նաև ակտիվիստ, ֆեմինիստ և իրավապաշտպան Մարիամ Կուրշուդյանի հետ «Իմ պայքարող ընկերուհին» հանդիպման շրջանակում: Համայնքի ներկայացուցիչների հետ քննարկվեցին ակտիվիզմի, ֆեմինիզմի, սեռերի հավասարության և տրանսֆեմինիզմի պատմությունն ու հիմքերը:

**2018**թ.-ի օգոստոսի **20**-ին իրավապաշտպան և սոցիալական ձեռներեցության/բիզնես ոլորտի մասնագետ Նվարդ Մինասյանը «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի աշխատակիցներին և շահառուներին ներկայացրեց սոցիալական ձեռներեցության գաղտնիքները, սոց.ձեռներեցության և ձեռնարկատիրության տարբերությունը՝ կարևորելով համայնքի զարգացումը սոցիալական փոփոխությունների միջոցով:



2018թ.-ի օգոստոսի 13-16-ը
«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան
Հասարակական կազմակերպությունը
Աղվերանում կազմակերպել էր 2-րդ
Տրանս Ճամբարը:

«Իրավունքների Կողմ» իրավապաշտպան
ՀԿ-ն ճամբարին հրավիրել էր գենդերային
հիմնահարցերի միջազգային փորձագետ-
դասընթացավարների:
Ճամբարը կազմակերպվել է
«Ժողովրդավարության Եվրոպական
Հիմնադրամի» ֆինանսական
աջակցությամբ:

Լիլիթ Մարտիրոսյանը նշում
է, որ տրանսճամբարը կկրի
շարունակական բնույթ,
քանի որ դա օժանդակում է
համայնքի անդամների
միմյանց ճանաչելուն,
ինքնօգնության խմբերի
ձևավորմանը և ավելի ամուր
տրանս համայնք ունենալուն,
ամբողջ կովկասյան
տարածաշրջանում:



# ԿԱՐՈՒՁԵՒԻ ԵՒ ԴԻՄԱՀԱՐԴԱՐՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

«Ժողովրդավարության Եվրոպական հիմնադրամի» ֆինանսական աջակցությամբ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն կազմակերպում է կարուձևի և դիմահարդարման դասընթացներ տրանս համայնքային կենտրոնում տրանս անձանց համար: Վերջում լավագույն մասնակիցներին հանձնվում են վկայականներ և տրվում է աջակցություն աշխատանք գտնելու հարցում:





# ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍՎԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՑԱՆԿ

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ.
ԹԵՄԱ «ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՀԱՆԴԵՊ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՒ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՈՎ ԱՅԼ ԴԵՊՔԵՐ» 2016-2017 ԹԹ. — **1**

ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ — **1**

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ. ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ — **1**

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ — **10**

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ.
ԹԵՄԱ 1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ
ԹԵՄԱ 2. ՖԵՄԻՆԻԶՄ - ՏՐԱՆՍ ՖԵՄԻՆԻԶՄ — **2**

4-ՕՐՅԱ ՏՐԱՆՍ ՃԱՄԲԱՐ — **1**

## Օգոստոս ամսվա ընթացքում միջոցառումների մասնակիցների թիվը

**93**

**2018Թ.** ՍԵՊՏԵՄԲԵՐ
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ
ԲՈԼՈՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԵՆ։

+374 11 880 770
www.rightsidengo.com
rightsidengo@gmail.com
@RightSideNGO
RightSideNGO
RightSideNGO
RightSideNGO

**ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ**
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ